Հանգուցեալ Տէրն Յակոբայ Մէլ-տէնեան Աշրամաշեանցի Յովհաննէսի քրոջը հանգուցեալ Փօլիս հանըմ ընկէց Նպաստ-աւծոյ նուաչագրին աւրուճերէնն հայերէնի Թարգմանութիւնը.

## ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԵՆԴԱՆՒՈՅ

## ԵՒ ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆԻ

Գոհութիւն Աստուծոյ, որ հասկացութիւն ունեցող մարդկան. և իւր ազգորդութեամբը կամեցուցին կամքն յաջողեց. և բարերարութիւն պատուիրեց իւր սիրելեացը. յայս առթիւ իւր արդարութէ հնազանդողներուն, կրկնապատիկ վարձք տուաւ ընտանեաց իրաւունքը վճարելն. և չափ վարձք ալ տուաւ իւր ինչքէն ազատութիւն ընողին.

Փառք անոր, որ անփոփոխ է և անմահ, և կենաց ժամն ու սահմանը չափեց.

Վասն զի կեանք գործքերէն է, և զայն շատցնողը աւելի վարձք տաւ. և յաւիտենականութիւն ժառանգեց, և թէ այս և թէ հանդերձեալ աշխարհի մէջ բարի անուն տուաւ. որ այս գործը իւր կենդանութեանը և առողջութեանը կատարեց ուզեն մարդ և ուրախ սրտիւ հրամանագէ յառաջ փախտարով իւր վերջին յանկարծակի կոչումէն. Վասն զի անձը չգիտէր թէ ո՞ւր պիտի պատահի իւր մահը. զի մահը վճիռ է և ոչ որոշմութիւն. և հարկ է մահն ընդունիլ ուրանց փախչելու անորմէ ուզել հաւատով, բարի գործով, իւր ընտանեաց բարի կամեցողութեամբը որբոց և աղքատաց ազատութիւն տալով Աստուծոյ հաճոյքը կատարելով. և սրտի խորհուրդն յայտնելով իւր կամքը գրել աշխարհէս ելնել առաջ։

Ես խոստացայ և խոստովանեցայ անձիս վրայ հանգուցեալ Մէլքոնեան Պ. Յակոբի կողակից Աշրաասէնացի Յովհաննէսի դուստր Փարիս հանըմ դնելով անունս ու կնիքս։ Ըսկիա եւզած իմ կենդանութեանը առողջութեանը և ուզեմ մարդ ստորագրել վկայից ներկայութը. որ ամէն ինչքս ու ստացուածքս գրամ՝ ինչ որ կը գտնուի պատրաստի պարատուցթուղթ, քամեալ. ունէս ուրիշներու վրայ. Իմ իրաւունքս զոր ընկերէս (կողակցէս) ժառանգեցի. ինձի վերաբերեալ ուրիշի վրայ եղած առնելիք. ամեղէն արծաթեղէն զարդք, ու պղնձեղէններ, և ուրիշ բաներ. և տան ամէն բաները կաւեղէն, պղնձեղէն, և թէ փույք և աղանելիք, և այլն։ Եղեւ ալոլինէն զոր որ պիտի յիշուին, և տունը և արտի կարը. որ Պօրճ կ'ըսուի. այն է արտն 'ի Սնդորիէ. որ ասոնք պիտի վճարուին ըստ յօղուածոյս որ ստոր գրուած է։

Ա. Յօդուած։ Այն ամէն պատրաստականն գրամէն, որ մնացելս յետոյ պիտի գտնուի, և վերոյիշեալ առնելեացս մորհանքներէն, նախ յիսուն հազար (50000) ղրշ վճարուի մեռնելուս օրն ամէն պիտոյից, պատանքի, գաղաղի և թաղելու, և ինչ որ հարկաւորի [illegible] թաղել տալու համար, թէ որ մահս ուրիշ տեղեաց մէջ պատահի. ինչպէս է Ալբովա և կամ 'ի Պոտոմոտո և Ալէքսանդրիա. և գերեզմանս առ [illegible] նայ վանուց մէջ պիտի ըլլայ այն գերեզմանատունը, ուր երկու թաղուած է։ Երեսուն հազար (30000) ղրշ վճարուի գերեզմանի մարմարեայ քարին համար, նման երկանս գերեզ-

digitised by A.R.A.R.@

մանաքարին։ Տասն հազար (10000) դրշ. Կարգաւորաց և Սարկաւագաց վճարուի, որ Եգիպտոսի Եկեղեցին կը պաշտեն։ Հինգ հազար (5000) դրշ. Եկեղեցւոյն տրուի Թաղմանս օրը մատղին և պատարագաւոց. Հինգ հազար (5000) դրշ. վճարուի նմանապէս նոյն շաբաթ երեկոյին։ Տասն հազար (10000) դրշ. Թաղմանս քառասներորդ օրը վճարուի 'ի վանս սրբոյն Մինասայ մատղին, պատարագաւոց, և ողորմութիւն աղքատաց, կարգաւորաց և մատաղի համար։

Վերոյիշեալ ծախքերն ընելէն վերջը նոյնպէս հարիւր յիսուն երկու հազար և հինգ հարիւր (152.500) դրշ. հետևեալ անձանց վճարուի. Իննսուն հազար (90000) դրշ. երեք քերցս, որք են Հերոբ խաթունն կողակից Գ. Գրիգորին, Մարիամ խաթունն կողակից Գ. Մինասին. և Արզուհի խաթունն կողակից Գ. Պետրոսին, ամէն մէկին երեսուն հազարական դրշ. նոյն դրամէն քսան հազար (20000) դրշ. վճարուի տասնական հազարէն նաև հօր եղբօր որդւոյս, Գ. Գէորգին և Գ. Կարապետին, որ հանգուցեալ Երուսաղեմացի Յակոբին որդիներն են, և անկից զատ ուրիշ ոչինչ չունին։

Նոյն դրամէն նաև տասն հազար (10000) ղրուշ քրոջս աղջկան որբուհիին վճարուի. և եօթն հազար հինգ հարիւր (7500) երեք հաբէշ աղախիններուն, որոնց ազատութիւնն արդէն յառաջագոյն տրուած է։ Տասն հազար (10000) վճարուի երկու աղախիններուս, որք այժմ տանս մէջն են, որոց անուանքն են Փիտան և Անքեշէ և բոտ կտակագրին ազատ են։ Տասն և հինգ հազար (15000) ղրուշ ևս Եգիպտոսի աղքատաց բաժնուի 'ի փառս Աստուծոյ. յիշեալ դրամն կը լմնայ։ Քսան և հինգ հազար (25000) ղրուշ ևս տրուի կտակին մէջ քիլին (որոյ անուանը վարը պիտի յիշուի) և այս այն դրամէն վճարուի, որ իմ մեռնելէս զկնի գտնուին. ինչպէս են եօթն և կէս քրաթ զոր երկանէս ժառանգեցի, երկու հազար և երկու հարիւր քեսէ (որք Եգիպտոսի ողջ դրամ են) զոր երկանս չնորհք բրած էր Էֆէնտինայ Մոյիս փաշան. և Գ. Կարապետէն իբրև ընկած ժառանգութիւնը. և Գ. Գրիգորէն բոլոր առնելիքներս, այդ ամէնքը վճարուի այնպէս, ինչպէս որ պիտի յիշենք վարը։

Եօթն քրաթն (որ ժառանգութենէն եկաւ) Մկրտիչ պեկէն առնուի գիտութք պատրիարքարանին Հայոց որ յԵգիպտոս և երկու քերցս, և երկու մասի բաժնուին. առաջին մասը քոյրերուս տրուի, ամէնը երեք բաժին ընելով, և երկրորդ մասը, գիտութեամբ պատրիարքարանին Հայոց և մեծամեծաց կամ իշխանաց ազգին կալուած մը գնուի, և Եգիպտոսի եկեղեցւոյն յիշատակ ըլլայ, և անոր արդիւնքն Եգիպտոսի վարժատան տրուի աղքատ տղայոց համար. բայց այն առնելիքը որ Գ. Կարապետին ժառանգութենէն հասած է, նոյն ժամանակին նորա վրայ մուրհակ մը գտնուելով, վերջը ուզուի գիտութեամբ երեք քոյրերուս և պատրիարքարանին Հայոց որ յԵգիպտոս. և առնուելով երկու մասի բաժնուի, մաս մը տրուի քոյրերուս և միւս մասը Հայոց հիւանդանոցին վճարուի որ յԵգիպտոս, գիտութեամբ Հայոց պատրիարքարանին։

Բայց իմ առնելիքս (որ 'ի վերայ Գ. Գրիգորին), գիտութեամբ քոյրերուս և Եգիպտոսի Պատրիարքարանին առնուելով երկու մասի բաժնուի, առաջին մասով կալուած առ֊

digitised by A.R.A.R.@

նուի և սուրբ Աթենասայ եկեղեցւոյն յիշատակ ըլլայ արգեանց համար, և միւս մասը քըրմերուս տրուի։

Բ. Յօդուած։ Ոսկեղէն և արծաթեղէն զարդերն, որք մեռնելէս զկնի կը գտնուին, իմ կամօքս տրուի քրոջս Աբրուհի խաթունին. զարդերն են ադամանդեայ լուսնաձև նշան մը՝ որ երկանեաս է. ադամանդեայ փէլէմէնք սաղ մը, ադամանդեայ մատանի մը և գերդան մը։ Ադամանդեայ քարով օղ փիրէնկի զոյգ մը, ադամանդեայ մատանի մը, ոսկի ժամացոյց մը ադամանդեայ քարով զարդարեալ և ոսկէ գօտօնով. հինգ թելով մարգարտէ զարդ մը (որուն թիւը 277 հատ է) վրան էլմաստ քարով տրուին իմ քրոջս Մարիամ խաթունին։ Զոյգ մը օղ ադամանդեայ քարերով, և մատանի մը եագութ ադամանդեայ քարով, տրուի Հօրս խաթունին։ Ոսկէ ապարանջան մը ադամանդով, մատանի մը ադամանդով և ոսկով, զարդ ոսկեղէն և արծաթեղէն տրուին երկու աղախիններուս, որոնք պիտի ազատին կտակագրիս առանց մէկէ մը արգել գտնելու։

Գ. Յօդուած. Այս ամէն ինչքերը որք տանս մէջ կը գտնուին, և որք վերը չյիշուեցան, ինչպէս են անօթք պղնձեղէնք և այլն. ասոնցմէ երկու պղնձեղէն կաթսայք, երկու անկողին փուեկերով, լուացարան մը (լեկէն և իպրիկ) և կոնք մը լուանալեաց, երեք վերմակներ, երեք շիլթէ և երկաթեայ պատկերու մահճակալ (քարէօլա) երկու ափսէնէ սկուտեղ (թեպսի) յախճապակեայ (չինի) և երկու ափսէնէ գաւաթ, տրուին երկու աղախիններուս. բայց ամէն կտաւեղէն և մետաքսեայ հագուստներս բաժնուին Հայոց աղքատ Օրիորդներուն. և ասոնցմէ զատ ինչ որ տանս մէջ գըտնուի բոլորն ալ օրինաւոր գնով ծախուելով, նոյն դրամով տեղ մը առնուի ուր որ ըլլայ, գիտութ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր. որ յԵրուսաղէմ. և յիշատակ ըլլայ յանուն իմ և երկանս Սուրբ Յակոբայ վանուց՝ որ յԵրուսաղէմ։ Եւ անկից եկած առաջին արդիւնքէն նոյն տեղին (յիշեալ) շինութեան վճարուի, և ինչ որ աւելնայ այն արդիւնքէն տրուի աղքատաց, որք ՚ի Ս. վանս Երուսաղէմի կը գտնուին։

Դ. Յօդուած. Պզտիկ տունը և արտի կտորը՝ որ Պօլս կ՚անուանի ՚ի Սագարիէ, ասոնք երեք քըրմերուս տըրուին երեք մաս բաժնուելով, լուսակալին։

Կը պատուիրեմ բոլոր ինչքերը և բաժանման կարգադրութիւնը ես իմ յօժար կամօքս և ուրախ սրտիւ, առանց մէկէ բռնադատուելու ՚ի կենդանութեանս և յառողջութեանըս կտակեցի. ներկայութեամբ վկայից՝ որ կան ՚ի ներքոյ, և ազգապատութեամբ Նաւածոյ. նաև ներկայութեամբ Պ. Յակոբի Տ. Գառպարեան կտակիս վերջին, որ է յազգէն մերմէ Իզմիրցւոց և երեւելի վաճառական Անգղիացւոց. և զայս վերջին իմ կտակս, որ մեռնելէս զկնի իրագործելու իրաւունքը այս կամ բաժանէ. զի հաստատիմ և բարեհամբաւ է. և իր վրայ ստորոգ մը չունիմ այն հաշուին համեմատ զոր կենդանութեանս իրեն հետ ունիս. և ինքն յօժար կամօք ընդունեց կտակիս վէրիլութիւնը ներկայութեամբ ՚ի ներքոյ յիշելոց. և իր աշխատանաց փոխարէն զինքն վարձատրեցի, ինչպէս որ վերը յիշուեցաւ, և նոր կըտակիս հաստատման և առաջինին խափանմանը համար, զոր յառաջագոյն ընելով Պատրիարքարանի մէջ գրըուած էր, պիտի ջնջուի որ անով գործ չտեսնուի. զի այս կտակս ուրախ սրտիւ և յօժար կամօք իմ. և երեք



digitised by A.R.A.R.@

օրինակ լոյսի միատեսակ, մինն իմ քա-ղաք Ռոմայ, երկրորդն Պատրիարքարան-տունի, և երրորդն կատակիս մերիկին յանձնուի, որով իրեն փարձն կ'առ-նէ և մէջի գրուածները կը գործադ-րէ առանց խառնակութեան ոչ ժառան-գաց և ոչ այլոց կողմանէ. և անկից բան մը չփնտրուի երբէք, զի չունիմ ոչինչ անոր վրայ. և այս բոլոր գործո-ղութիւնը այս կատակիս համեմատ ըլ-լայ. զի այս՝ իմ՝ յօժար կամօքս և հա-ճութեամբ յօրինուեցաւ ։ Ով որ այս գրուածէն փոքր ինչ աւելցնէ կամ պակսեցնէ, յաւուրն դատաստանի Տէրն մեր Քրիստոս իրեն ոսոխն ու դատախազը ըլլայ. և նզովեալ ըլլայ բոլոր Մարախիասաց բերնէն և անոր տան մէջ օրհնութիւն չըլլայ և ոչ ինչք ու ստացուածք. և Աստուած վէքիլ և վկայ ըլլայ.

| | |
|---|---|
| ١٢٨٦ | Փարիս Հանըմ Խոլանկէօ |
| Սէֆէր ٢٣ | հանգուցեալ Ալէքսան |
| դէ | Նեան Յովէբէ |
| 1869 | կնիք |

Երուսաղէմայ Յօհաննէսի դաւա-տոր Փարիս Հանըմը այս ժողովքին ներկայ էր. և ներկայ գտնուեցաւ նաև Պ. Յակոբ Տէր Գասպարեան Իզմիրցի, որ երեւելի վաճառական է Աղեքսանդրիա։ Մեր առջեւը խոստո-ցաւ և խոստովանեցաւ. և կտակը զոր Հանըմը ուրախութեամբ և ա-ռանց անձնական տկարութեան գը-րեց, իւր յօժար կամքովն էր առանց մէկէմը ստիպուելու. և Պ. Յակոբը որ ներկայ էր մեր քով, փոխանորդ կարգեց սոյն կտակին որպէս զի իւր մահուանէն զկնի իւր գրոյն համե-մատ բաժանէ, նա ալ յօժարութբ ընդունեց սոյն փոխանորդութիւնը (վէքիլութիւնը) մեր ներկայութեա-նը. Այս ամենուն վկայ ըլլալով կը կնքեմք. նա եւս Աստուած ալ թող վկայ ըլլայ.

| | |
|---|---|
| Սնի· և Հայերէն Գիր | Փորձ Հայ. Գրով |
| վկայ եմ և ներկայ | վկայ եմ և ներկայ |
| Եղիշէ Տէրմինէ | Պարոն Յակոբ |
| Պօղոսեան. | Աւըրգէեան. |

—Մօտերս Ս. Աթոռոյս տպագրու-տունը առանձին ձեռնագրութեան մաշտոց մը տպել կը պատրաստուէինք. Ս. Աթոռոյս Հոգեւորական ժողովն ուզեց որ սոյն մաշտոցի մէջ նզովե-լոց կարգն աւելցուի նաև Պիոս. Թ. արդի Պապն Հռոմայ. որ ուզեց Աս-տուծոյ անսխալութեան փառքն իրեն վերաբերել.

—Մասիս լրագրոյն 936 թիւը կար-դալով ոչ սակաւ զարմացանք այն փո-քրր յօդուածին վրայ որ Երուսաղէ-մին կը վերաբերի. որ է

«Երուսաղէմայ Ս. Պատրիարքէն առ Գեր. Սիմէօն Եպիսկոպոսն քա-շուած հեռագրէ մը կ'իմանամք, որ Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Սէօ-րակը Արքայանը Երուսաղէմի կալ-ուածոց վրայ Ս. Պատրիարքին կող-մէն տեսուչ կարգուած Երուսաղէ-մայ վարդապետին երկու ապտակ զարկեր է ։ Կ'ըսուի թէ Երուսաղէմայ Ս. Պատրիարքն այս անվայել թշնա-մանաց գործը հեռագրով Բարձր. Մեծ. Եպարքոս Ալի փաշային իմա-ցուցեր է և հատուցում կը խնդրէ ։»

Զարմացանք ըսինք վերը, այո՛, վասն զի այս փոքր յօդուածի մէջ քա-նի մը գիտողութեան արժանի կէտեր կան.

Ա. որ Մասիսի Պն. Խմբագի-րը շատ լաւ գիտէ թէ այն Եգիպ-տոսի Գեր. Առաջնորդ անուանած Եպիսկոպոսը ինչ պաշտօնով գնաց յԵգիպտոս. որ այն յամանց անոր

digitised by A.R.A.R.@

երկթային ահռամեծ կարծեցեալ պաշտօնն ալ արդէն տարի մի է որ լռացած է. իսկ այն Գեր. Եպիսկոպոսի վերադարձը Մուշի Գ. Խմբագրին կը հարցընեմք թէ ինչո՞ւ մինչև ցարդ ուշացած է։ Զի եթէ այդ Գեր. Եպիսկոպոսն այդքան բանիբուն, գործունեայ, աշխոյժ և ազգասէր է, ինչպէս բան է որ իւր սեպհական առաջնորդական դէմն որոյ վրայ եպիսկոպոսութեամբ պսակուած է և որոյ մէջ այսքան հազար հոգի Հայ ժողովուրդ կայ այնպէս երեսի վրայ թողուցեր և գնացեր է Եգիպտոս, ուր 150-200 հոգի հազիւ կը գտնուին, և այն տեղ կուզէ իւր ազգասիրական եռանդը ցոյց տալ մեծ, մեծ Ազգասիրութիւն.

Այս Գերապատիւ Եպիսկոպոսն Եկեղեցական կանոնաց կարծեօք ամենևին տեղեկութիւն չունի. որ խրատի կարդալէ առաջնորդներուն ուրիշ դէմերուն և վիճակներու վրայ ձեռնանալ. (այս ևս մեծ չունի վասն զի տարիքը դեռ քիչ է կամաց կամաց կը սորվի)։

Բ. Կը հարցունեմք Գ. Խմբագրին թէ այդ իւր անուանած Գեր. Առաջնորդի հրովարտակն ու կոնդակն արդեօք ո՞վ տուած է. Ազգ. Վարչութիւնը արդեօք, — ոչ։ Պօլսոյ Սրբազան Պատրիարքն արդեօք առանձնակի, — ոչ։ Ինչո՞ւ չհրատարակեց ի լուր ամենեցուն. եթէ աս երկուքին մէկը անոր կոնդակը կամ հրամանը տուած են.

Գ. Գ. Խմբագիրն կ'ըսէ թէ Գեր. Առաջնորդ երկու տարի զարկած է. և այս իբր հեռագրէն առնելով կ'ըսէ, Երուսաղեմայ Պատրիարքն իւր հեռագրի մէջ ոչ երկու և ոչ 12 տարուան անուն յիշած չէ, այս ալ հեռագրի վրան կարծեք մի է. Իսկ զարնելու մասին որ անվայել ասած է, որ ոչ թէ անվայել է այլ բարբարոսական գործ է. բայց քանի որ նա անվայել ըսած է այս մասին իբրև արդարախօս, թող ընդունիմք թող տալ.

Դ. Երուսաղեմայ Վարդապետ մի ըսած է. այս վարդապետը Մուշի Գ. Խմբագրին շատ լաւ կը ճանաչէ և իրեն հետ շատ տեսութիւն ըրած է. որոյ անունն անգամ չկրնար յիշել այս տեղ, և առ ոչինչ համարելով մը մէջ կը բերէ. և անօրինող ու կարգէն և չափէն դուրս ելած Եպիսկոպոս մի Գեր. Առաջնորդը կ'անուանէ.

Բոլոր խմբագիրները նմանապէս և Մուշու շատ Եպիսկոպոսները և Վարդապետներու անկարգ և ապօրէն ընթացքը հրատարակած են, և շատ լաւ են ըրած անոնց ուղղութեան համար. իսկ այս Եգիպտոսի բնակող Առաջնորդի ապօրէն, եպերելի և զզուելի ընթացքն թէև մինչև հիմայ և ոչ մէկ լրագիր հրատարակեց, բայց և ոչ մէկու շողոքորթութիւնը ցարդ տեսած ենք.

Ես այսօր Մուշի էջերուն մէջ այս տեսակ վայրենական գործի մը վրայ ներողութեամբ և գրեթէ անյարմար խօսիլը սխալ զարմացնէ անշուշտ շատերը.

Փ. Վ.

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Յունիս տասն և երկու ուրբաթ երեկոյին. Սուրբ քաղաքիս մէջ ամենայն ուրախութեամբ կատարուեցաւ Օգոստափառ Սուլթան Ապտիւլ Ազիզ խան մեր խնամատար Կայսեր

digitised by A.R.A.R.@